Գրքեր՝ բոլոր յերկրների. միացի՛ք.

№ 46

Ի՞ՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՍՏՈՒԳԱՏԵՍԻ ԿԱՄՊԱՆԻԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՀՍԽՀ ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ.

1938 ՅԵՐԵՎԱՆ

352
Ի-61

26 APR 2013

352
Ի-61

1 MAR 20

№ 46

ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՍՏՈՒԳԱՏԵՍԻ ԿԱՄՊԱՆԻԱՆ

3162
1010/42505

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՀՍԽՀ ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ

1933 ԵՐԵՎԱՆ

ՊԵՏ. Գոս. Գրադարան Библиотека
ՀԱՍՀ—ССРА
անվ. А. Масинкиана
Ս. ՄԱՍԻՆԿԻԱՆԻ ԱՆՎԱՆ

Պետհրատի տպարան
Գլավլիտ 9168 (բ)
Պատվեր 342
Տիր. 3000

ՎՈՐՈՇՈՒՄ

ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահության

«ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՍՏՈՒԳԱՏԵՍԻ ՄԱՍԻՆ»

«29» հունվարի 1933 թ.

Ցերկրորդ հնգամյակի առաջին տարվա գարնանացանի հաջող կատարման և այդ հիման վրա կոլտնտեսությունների—խորհտնտեսությունների տնտեսական-կազմակերպչական ու քաղաքական մարտունակության ամրապնդման նպատակով, այլև գարնանացանի այդ կատարման կապակցությամբ խորհուրդների աշխատանքները վերակառուցելու, աշխուժացնելու համար՝

ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահությունը ՎՈՐՈՇՈՒՄ Է.—

1. 1933 թվի փետրվարի 10-ից ՀՍԽՀ սահմաններում անցկացնել գյուղական խորհուրդների աշխատանքների մասսայական ստուգում։

2. Գյուղխորհուրդների աշխատանքների այդ ստուգումն անմիջականորեն կապակցել առաջիկա գարնանացանի հաջող կատարման ու գերակատարման նշանաբանի հետ։

3. Այդ ստուգատեսն անցկացնել առաջին հնգամյակի հանրագումարի, յերկրորդ հնգամյակի առաջադրանքների՝ հատկապես ներկա գարնանացանի կամպանիայի հաղթանակի, պետական բոլոր տնտեսական-քաղաքական առաջադրանքների լրիվ կատարման, գյուղխորհուրդների աշխատանքների վերակառուցման, գյուղական աշխատակիցների դասակարգային մարտունակության, դասակարգայնորեն հաբազատ ու հեղափոխականորեն զգոն ակտիվի ներգրավման և այլ հարակից խնդիրների տեսանկյունով։

4. Ստուգատեսի ընթացքում՝ Սահմանադրության ընդհա-

նուր հիմունքներով հետ կանչել ու հեռացնել գյուղխորհուրդնե-
րից սոցիալապես ու իդեոլոգիապես անհարազատ, քայքայված,
տպորտունիստական տարրերին։

5. Ընտրողների նախաձեռնությամբ ու շրջգործկոմների վո-
ր ոշմամբ և վերջիններիս անմիջական ղեկավարությամբ թուլա-
տրել կատարել վերընտրություններ այն գյուղխորհուրդների,
որոնք չեն կատարել կուսակցության և իշխանության մարտա-
կան տնտեսական-քաղաքական առաջադրանքները և ուղղակի,
թե անուղղակի կատարել են կապիտալիստական-կուլակային
խավերի սոցիալական պատվերը։

6. Պարտավորեցնել Կենտգործկոմի կազմբաժնին՝ ղեկավարել
ու գլխավորել գյուղխորհուրդների ստուգման ամբողջ աշխա-
տանքները ու միջոցներ ձեռնարկել այդ ստուգատեսի հաջող
կատարման-ավարտման համար՝ կամպանիայի շուրջը կազմա-
կերպելով գյուղի կուսակցական և խորհրդային կոլտնտեսական,
աշխատավորական վողջ ակտիվին։

7. Ներկա ստուգատեսի աշխատանքները տեղերում գլխավո-
ր ելու պատասխանատվությունը դնել գարնանացանի կամպանիա-
յի համար Կենտկոմի և Ժողկոմխորհի կողմից գործուղված հատուկ
լիազորների վրա։

8. Առաջարկել շրջգործկոմներին՝ նախագահության անմի-
ջական պատասխանատվությամբ՝ կազմակերպչորեն գլխավորել
ու ղեկավարել այս ստուգատեսի բոլոր աշխատանքները, ստեղ-
ծել խորհրդային-հասարակական ակտիվ ու շահագրգռություն
մարտական-քաղաքական ներկա կամպանիայի շուրջը և յուրա-
քանչյուր տասնօրյակում ուղարկել Կենտգործկոմին կատարված
աշխատանքների ամփոփումները։

Ստուգատեսի ընթացքում ղեկավարվել ԿԳԿ-ի նախագահու-
թյան ներկա վորոշման և կազմբաժնի հրահանգների հիմունք-
ներով։

9. Առաջարկել բոլոր ժողկոմատներին և կենտրոնական հա-
սարակական կազմակերպություններին իրենց տեղական մարմին-
ների միջոցով ակտիվ ոժանդակություն ցույց տալ ստուգա-
տեսին։

10. Պարտավորեցնել «Խորհրդային Հայաստան»-ի, «Սոցիա-
լիստական Գյուղատնտեսության», «Ավանդարդ»-ի և մամուլի
կենտրոնական ու տեղական բոլոր որգաններին՝ մասսայակա-

նացնել խորհուրդների ստուգատեսի քաղաքական-տնտեսական
նշանակությունն ընդհանրապես և առաջիկա գարնանացանի
խնդիրները՝ մասնավորապես։

11. Ներկա ստուգատեսի աշխատանքների ընդհանուր ղեկա-
վարության համար՝ ԿԳԿ-ի նախագահության կից ընտրել կենտ-
րոնական Հանձնաժողով՝ հետևյալ կազմով՝—

Նախագահ՝ ընկ. Գ. Ստամբոլցյան

Անդամներ՝ ընկ. ընկ. Ս. Ամբրանյան (Կենտկոմ)
Ա. Կոստանյան (Հողժողկոմատ)
Ս. Ալմազյան (Ֆինժողկոմատ)
Հ. Գալիկյան (Արդժողկոմատ)
Վինոգրադով (ԲԳՏ ժողկոմատ)
Իշխանյան (Գ. հիմն. կենտ. վարչ.)
ՀԼԿՅԵՄ կենտկոմի նեղկայացուցիչ
«Խ. Հ.»-ի »
«Սոց. Գյուղատնտեսութ.» »
«Ավանդարդ»-ի »
«Կրզել Շոֆակ»-ի »
«Խ. Շինարարություն» »

ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի
նախագահի տեղակալ՝ Ռ. Դաշտոյան

Ի ա. ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի
քարտուղարի՝ Գ. Ստամբոլցյան

Ցերևան

ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՍՏՈՒԴԱՏԵՍԻ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ՄԱՍԻՆ

ՀՍՄՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահության վորոշմամբ՝ սույն 1933 թ. փետրվարի 10-ից սկսվելու է խորհուրդների աշխատանքների ստուգատեսը, վորի ընթացքում գյուղխորհուրդները հաշվետու են լինելու իրենց ընտրողների առաջ։

Խորհուրդների ստուգատեսի այս կամպանիան պետք է դրավի մեր բանվորների, կոլտնտեսականների և քաղաքի ու գյուղի վողջ աշխատավորների ուշադրությունը։

Առաջիկա հաշվետու կամպանիան անցնելու է պրոլետարական պետության և սոցիալիստական շինարարության մեծագույն հաղթանակների պայմաններում։

Հակառակ վողջ կապիտալիստական աշխարհը համակած անախընթաց, համալնատարած և որգանապես անբուժելի ճգնաժամի՝ Խորհրդային Միության պրոլետարիատը և բազմամիլիոն աշխատավորական զանգվածները Կոմունիստական կուսակցության լենինյան կենտկոմի բալշևիկյան ղեկավարությամբ հաղթանակորեն ու նախաժամ ավարտեցին հնգամյակի հոյակապ ծրագիրը։

Միջազգային-քաղաքական վիթխարի արժեքի այդ հաղթանակով՝ վերջնականապես անվերապահորեն ավարտվեց սոցիալիզմի հիմքի կառուցումը և ձեռնարկվեց սոցիալիզմի հոյակապ շինքի ամբողջական ու ավարտական կառուցման։

Առաջին հնգամյակի հաղթանակը հանդիսացավ հիմքն ու գրավականը՝ կենսագործելու սոցիալիստական անդասակարգ հանրակարգի կառուցումը։

Այս պատմական հաղթանակների պայմաններում, յերկրորդ հնգամյակի առաջին տարվա առաջադրված հոյակապ խնդիրները պահանջում են խորհուրդներից ևս իրենց աշխատանքները դնել վորակապես ավելի բարձր աստիճանի վրա։ Այս տեսակետից խորհուրդների աշխատանքների վերակառուցման, անձնական կազմի թարմացման անհրաժեշտությունը, պայքարի և գործարարության նոր մեթոդների անցնելու հրամայականությունը, ինչպես և յերկրորդ հնգամյակի առաջին տարվա բալշևիկյան զարնանացանի լիովին և արագ կատարման պահանջը՝ հիմք հանդիսացան խորհուրդների աշխատանքների այս ստուգատեսի կամպանիայի։

Խորհուրդների ներկա ստուգատեսն ընթանալու է հետևյալ նշանաբանների տակ՝—

ա) ամրապնդել յեվ ռազմունակ դարձնել պրոլետարական դիկտատուրայի բոլոր ողակները։

բ) ապահովել սոցիալիստական շինարարության հաղթական արշավը բոլոր ընագավառներում՝ հատկապես գյուղի սոցիալիստական վերակառուցման ասպարիզում։

Առաջնորդվելով սկզբունքային-քաղաքական այս նշանաբաններով՝ կուսակցական-խորհրդային որգանները և պրոլետարական, կոլտնտեսական, աշխատավորական ակտիվը ստուգատեսի ընթացքում առաջնորդվելու են հետևյալ հիմնական դիրեկտիվներով՝—

1. Կատաղի պայքար ծավալել դասակարգային թշնամու դեմ վորի որհասական դիմադրությունը՝ սոցիալիզմի կառուցման ներկա ետապում առավելապես սուր և «ներքին» ձևեր է ընդունել գյուղում։ Համատարած կոլեկտիվացման հիմունքներով լիկվիդացիայի յենթարկվող կուլակությունը հուսահատական փորձեր է կատարում ձախողելու գյուղի սոցիալիստական վերակառուցումը։

Դասակարգային թշնամու դեմ պայքարելիս պետք է ղեկավար սկզբունք ընդունել առաջնորդի այն խոսքերը, թե՝ «դասակարգային թշնամու դեմքը փոխվել է, վերջին ժամանակներս փոխվել է դասակարգային թշնամու տակտիկան գյուղում»—«թշնամին հասկացել է փոխված պայմանները, հասկացել է գյուղի նոր կարգերի ուժն ու զորությունը և հասկանալով այդ՝ վերադիրքավորվել, փոխել է իր տակտիկան», — «իսկ մենք այդ չենք հասկացել, նոր պայմանները չենք նկատել և շարունակում ենք կուլակության դեմ պայքարի մեր հին տակտիկան, մինչդեռ դա, այդ տակտիկան վաղուց է, ինչ հնացել է»։

2. Այդ պայքարը հաջող տանելու համար խորհուրդները պետք է ազատել այն ռազորտունիստական-հաշտվողական, կազմալուծված տարրերից, վորոնք անգիտանում են, անտեսում, թերագնահատում և նույնիսկ անմիջապես ոգնում-ոժանդակում են դա-

սակարգային թշնամուն և ուղղակի թե անուղղակի կատարում են կապիտալիստական-կուլակային խավերի սոցիալական պատվերը։ Այդ տարրերի փոխարեն՝ խորհուրդները թարմացնել քաղաքականորեն ռազմունակ պրոլետարական, կոլտնտեսական, աշխատավորական այն ակտիվ ուժերով, վերոնք դասակարգային հստակ գիտակցությունն ունեն՝ տեսնելու թշնամուն և քաղաքական դգաստությունն ու կամքը՝ անողոքաբար պայքարելու այդ թշնամու դեմ։ Պետք է հաշվի առնել այն ճշմարտությունը, որ «խորհուրդները հանդիսանում են գյուղի քաղաքական կազմակերպության սոցիալիստական ձևերը»։ Սակայն միմիայն ձևը բավական չէ։ Ամեն ինչ կախված է նրանից, թե ինչ բովանդակություն և մրցվում այդ ձևի մեջ. «հարցը միայն խորհուրդների՝ որպես կազմակերպական ձևի մեջ չէ, թեև այդ ձևը հեղափոխական մեծագույն նվաճումն է հանդիսանում։ Հարցը նախ և առաջ խորհուրդների աշխատանքի բովանդակության մեջն է. հարցը խորհուրդների աշխատանքների բնույթի մեջն է, հարցը նրանումն է թե ով է ղեկավարում խորհուրդները՝ հեղափոխականները թե հակահեղափոխականները» (ՍՏԱԼԻՆ)։

3. Անողոքաբար պայքարել հեղափոխական որինականության խախտման, անհոգի բյուրոկրատիզմի ու վարչարարության և այդ քաղաքական չարիքների անմիջական հեղինակների դեմ՝ հանուն պրոլետարական դեմոկրատիայի, մասսաների լայնորեն ներգրավման, հեղափոխական որինականության ամրապնդման, կազմ-մասսայական աշխատանքների ծավալման։

4. Պայքարել աշխատավոր կանանց խորհրդային աշխատանքի ներգրավման թերագնահատման դեմ՝ հանուն աղատագրված աշխատավոր կնոջ ակտիվ մասնակցության խորհուրդներում, այն հաշվով, որ ստուգատեսի ընթացքում յուրաքանչյուր շրջան ապահովված լինի առնվազն 1—3 գյուղխորհուրդների կին նախագահներով։

5. Վերջ տալ խորհուրդների մասսայական հասարակական ողակների՝ սեկցիաների, պատգամավորական խմբակների թերագնահատման պրակտիկային և բարձրացնել խորհրդային-հասարակական ակտիվի լայն մասնակցությունը խորհրդային դեմոկրատիայի հիմքը հանդիսացող այդ ողակներում։

6. Հիմնական շրջադարձ կատարել ազգային փոքրամասնությունների և սահմանամերձ շրջանների խորհրդային աշխատանքներում՝ պայքարելով այդ աշխատանքների թերագնահատման յերևույթների դեմ և ապահովելով մասսաների ակտիվ ներգրավումն այդ շրջանների խորհրդային աշխատանքներում։

7. Վերջ տալ կոլտնտեսական շինարարության ասպարիզում մանր-սեփականատիրական հին ավանդներին, քաղքենիական—սպառողական տրամադրություններին, պետական առաջադրանքների թերակատարման, խորհրդային-կոլտնտեսական առևտրի բացասական հնարավորությունների անտեսման — հանուն կոլտնտեսությունների տնտեսական-կազմակերպչական ամրապնդման, բերքատվության աճման, աշխատանքային-արտադրական դիսցիպլինայի բարձրացման, կոլտնտեսականների սոցիալիստական վերադաստիարակման, պետական բոլոր տնտեսական և այլ առաջադրանքների արագընթաց կատարման ու գերակատարման։ Անողոքաբար պայքարել ոպորտունիստական այն տրամադրությունների դեմ, որ գյուղատնտեսական մթերումների նորագույն որենքներն ինքնին իբր թե ապահովում են առաջադրանքների ճշգրիտ կատարումը։ Այս նոր որենքները, ընդհակառակն, պահանջում են խորհուրդներից լինել ավելի մարտունակ, զգոն և ակտիվ՝ կուսակցական-կառավարական առաջադրանքների կատարումն ապահովելու։

8. Անողոքաբար պայքարել խորհրդային հանրակարգի հիմքը հանդիսացող սոցիալիստական սեփականության անհոգատար վերաբերմունքի և հափշտակության դեմ՝ հանուն այդ սեփականության քաղաքական արժեքավորման և պաշտպանության։

9. Վերացնել ինքնագոհ և աչքակապուկ հաշվեզեկուցումները և կուսակցական խորհրդային վերադաս որգանների վորոշումների և առաջադրությունների ձևական-առերևույթ կատարումներին՝ հանուն կատարված աշխատանքների իրական արժեքավորման, այդ վորոշում-առաջադրությունների անշեղ կենսագործման և կատարման փաստական ռեալ ստուգման։

Խորհուրդների ներկա ստուգատեսը կատարվելու է 2-րդ հընգամյակի առաջին տարվա բայլշևիկյան զարնանացանի կամպանիայի անմիջական առնչությամբ ու կապակցությամբ։

Խորհուրդների այս մասսայական ստուգատեսը հանդիսանալու է մեծագույն կործանը այդ զարնանացանի հաջողության, վորն իր հերթին զարկ է տալու գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ծավալման, կոլտնտեսությունների տնտեսական-կազմակերպչական ամրապնդման, քաղաքի ու գյուղի տնտեսական-քաղաքական շաղկապի խորացման, մասսաների

նյութական, կենցաղային վիճակի բարվոքման, կոլտնտեսական առևտրի ել ավելի ծավալման և խորացմանը։

Գարնանացանի կամպանիայի հաջող կատարման ընթացքը, աշխատանքի սոցիալիստական ձևերի կենսագործումը և այդ աշխատանքի արդյունքների քանակական ու վորակական ցուցանիշները հանդիսանալու յեն նաև հատկապես գյուղական խորհուրդների դասակարգային ռազմունակության հիմքը։

Մենք կոչ ենք անում կուսակցական-խորհրդային բոլոր որգաններին, մասնավորապես, հասարակական կազմակերպություններին, բանվորական — կոլտնտեսական — աշխատավորական ակտիվին՝ բայշևիկյան տակտությամբ և անձնվիրությամբ լծվել խորհուրդների ստուգատեսի և բայշևիկյան գարնանացանի առաջիկա այդ մարտական կամպանիաներին՝ հանուն պրոլետարական դիկտատուրայի ամրապնդման ու սոցիալիզմի կառուցման հաղթանակի։

ՀՍՍՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
նախագահի տեղակալ Ռ. Դաշտոյան

Ի ս. ՀՍՍՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
քարտուղարի՝ Գ. Ստամբոլցյան

ՀՐԱՀԱՆԳ

Գյուղխորհուրդների ստուգատեսը անցկացնելու մասին

Հայկենտգործկոմի նախագահության վորոշմամբ ս. թ. փետրվարի 10-ից սկսվում է խորհուրդների աշխատանքների ստուգումը, վորի նպատակն է յերևան հանել յուրաքանչյուր գյուղխորհրդի աշխատանքների և աշխատակիցների թերությունները, հիվանդագին յերևույթները և գործնականորեն ոչնչացնել վերակառուցելու նրանց աշխատանքները սոցիալիզմի կառուցման ներկա շրջանի պահանջների համաձայն, դարձնելով գյուղխորհուրդները յերեսով դեպի կուսակցության և կառավարության առաջադրած քաղաքական-ֆինանսական խնդիրները (գարնանացանի արագ և լիովին կատարումը, կոլտնտեսությունների կազմակերպչական տնտեսական ամրապնդումը, մթերումների պլանների, միջոցների մոբիլիզացիայի կատարումը և այլն)։ Ստուգատեսը պետք է հիմնական խթան հանդիսանա իրական և վճռական շրջադարձ կատարելու այդ ուղղությամբ։

Գյուղական խորհուրդների աշխատանքների ստուգատեսի կամպանիան հաջող կազմակերպելու և ավարտելու համար, Հայկենտգործկոմի Կազմբաժինը առաջարկում է անմիջապես ձեռնարկել հետևյալ գործնական աշխատանքները՝

1. Ստուգատեսն անցկացնելու խնդիրը քննության առնել նախագահության նիստում, կայացնել կոնկրետ վորոշումներ՝ ապահովելու ստուգատեսի կամպանիայի հաջող ընթացքը և այս նպատակով կազմել աշխատանքի հատուկ ծրագիր։

2. Նախագահության նույն նիստում մոբիլիզացիայի յենթարկել շրջանի ակտիվին, յուրաքանչյուր մեկին կցել հատուկ գյուղի և պատասխանատու դարձնել նրան ստուգատեսի հաջող ընթացքի համար։

3. Հրավիրել շրջանային և յենթաշրջանային խորհրդակցու-

թյուններ՝ գյուղական և շրջանային ակտիվի մասնակցությամբ, որակարգ ունենալով խորհուրդների ստուգատեսի կամպանիայի նշանակությունը և մեր հերթական անելիքները, դարձնելով կամպանիան ստուգատեսի խթան գյուղի սոցիալիստական վերակառուցման, կոլտնտեսությունների, խորհտնտեսությունների ամրապնդման, գարնանացանի արագ կատարման ու գերակատարման և այլն։

4. Շրջանային և ենթաշրջանային խորհրդակցությունները ավարտելուց հետո, գյուղերում հրավիրել հասարակական լայն ժողովներ, լսելով կցված ընկերների զեկուցումները ստուգատեսի կամպանիայի նշանակության մասին, բացատրել աշխատավորությանը, որ ստուգատեսի կամպանիան անջատված չէ գյուղի մյուս կամպանիաներից, ընդհակառակն նա կոչված է ոգնելու և խթանելու գարնանացանի կամպանիան հաջող կատարելու և վերակառուցելու խորհուրդների աշխատանքները 2-րդ հնգամյակի պահանջների համեմատ, ուժեղացնելով և բարձրացնելով խորհուրդների դերը, որպես պրոլետարական դիկտատուրայի որդանների։

5. Նույն ժողովներում ընտրել բրիգադներ՝ ստուգատեսն անցկացնելու և գարնանացանի կամպանիային ոժանդակելու։

Բրիգադները կազմակերպվում են կամավոր ցուցակագրության հիման վրա, ներգրավելով գյուղակտիվին (հարվածային կոլտնտեսականներից, կոմսերիականներից, կանանցից, բատրակներից, չքավորներից և միջակներից)։

Կազմբաժինը բրիգադների գծով գյուղխորհրդի աշխատանքների ստուգատեսի և վերակառուցման ուղղությամբ առաջադրում է հետևյալ սիստեմը—կազմակերպել՝

ա) Վերադաս մարմինների և գյուղխորհրդի վորոշումների կատարումը ստուգող բրիգադ։

բ) Կանանց և չքավորության մեջ տարվող աշխատանքները ստուգող բրիգադ։

գ) Սեկցիաների և պատգամավորական խմբակների աշխատանքը ստուգող բրիգադ։

դ) Խորհրդի անդամների սոցիալական կազմի և նրանց զբաղմունքությունը ստուգող բրիգադ։

ե) Հեղափոխական որինականության, խորհրդային դեմոկրատիայի և սոցսեփականության որենքների կիրառումը ստուգող բրիգադ։

Գարնանացանի կատարման համար կազմակերպել հետևյալ բրիգադները

ա) Գյուղգործիքների հաշվառման և վերանորոգման։

բ) Ագրոմինիմումի կիրառման (սերմացուում, ախտահանում, պարարտացում և այլն)։

գ) Կադրերի պատրաստման և վերապատրաստման (բրիգադիրներ, տրակտորիստներ և այլն)։

դ) Քաշող ուժի ռացիոնալ ոգտագործման և կերի ապահովման բրիգադ։

ե) Պլանները կատարողներին հասցնող բրիգադ։

Ծանոթություն.— ա) Գարնանացանի համար ընտրված բրիգադները գործում են խորհուրդների արտադրական խորհրդակցությանը կից, մինչև գարնանացանի կամպանիայի վերջը։

բ) Գյուղի պայմաններից յելնելով կարելի է բրիգադների թիվը ավելացնել, պակասեցնել կամ փոփոխել՝ միացնելով կամ մասնատելով բրիգադները. անդամների թիվը չպետք է սահմանափակել և ընդհակառակն՝ վորքան հնարավոր է՝ մեծ թիվով աշխատավորներ պետք է ընդգրկել։

6. Հիշյալ կազմակերպչական բնույթի աշխատանքները պետք է ավարտել մինչև փետրվարի 15-ը, վորից հետո բրիգադներն արդեն իրենք պետք է կազմեն իրենց աշխատանքների ծրագիրը, կատարեն աշխատանքի բաժանում—այսպես որինակ՝ վերադաս մարմինների և խորհուրդի վորոշումները ստուգող բրիգադը իր անդամների մեջ կատարում է աշխատանքի բաժանում,—մի մասին հանձնարարում է ստուգել խորհուրդի պլենար նիստերի վորոշումները, մյուսին՝ նախագահության վորոշումները, մի յերրորդին՝ շրջգործկոմի և հասարակական ժողովների վորոշումները և այլն և այլն։ Կամ թե չէ կանանց և չքավորության մեջ տարվող աշխատանքները ստուգող բրիգադը՝ իր անդամների մեկ մասին հանձնարարում է ստուգել կանանց իրավունքների պաշտպանությունը գյուղդատարանի և արտադրական-ընկերական դատարանի կողմից, մյուսին՝ կանանց կենցաղի բարելավումը, մի յերրորդին՝ անգրագիտության վերացումը և այլն և այլն։

Այսպիսով խմբերի պետք է բաժանել բրիգադները, վորպեսզի մի կողմից աշխատանքը կոնկրետացվի, մյուս կողմից պատասխանատվության զգացմունքը բարձրացվի, միաժամանակ

ստեղծվի ավելի լայն հնարավորություն մասսաները ներգրավելու ստուգման աշխատանքներին։

7. Բրիգադները աշխատանքը ավարտելու յեն վոչ ուշ, քան մարտի 1-ը, վորից հետո իրենց նիստերում վերջնականապես ամփոփում են աշխատանքի արդյունքները, արձանագրելով թերությունները, մատնում կոնկրետ առաջարկություններ հետագա աշխատանքների համար։

Ամփոփման աշխատանքները պետք ավարտվեն վոչ ուշ, քան մարտի 3-ը։

Մարտի 3-ից մինչև 6-ը պետք է գումարել գյուղխորհուրդների ընդլայնած պլենումներ, վորտեղ լսվելու յեն բրիգադավարների զեկուցումը ստուգատեսի արդյունքների մասին և այդ նիստում էլ ամփոփվելու յեն ամբողջ ստուգման արդյունքները, կազմվելու յե մի ընդհանուր նակազ գյուղխորհուրդի աշխատանքների համար, վորպիսին ներկայացվում է հաշվետու ժողովին ի հաստատություն։

Նույն պլենար նիստում ամբողջ բրիգադավարների միջից ընտրվում է մեկ ձեռնհաս ընկեր, վորը և զեկուցելու յե ընտրողների ընդհանուր ժողովում, գյուղխորհուրդի զեկուցումից հետո կատարված ստուգման արդյունքների մասին։

Մարտի 6-ից մինչև 10-ը՝ գո մարել գյուղխորհուրդին յենթակա գյուղերում ընտրողների ժողով, վորտեղ դրվում է գյուղխորհուրդի հաշվետու զեկուցումը կատարված աշխատանքների մասին, հարակից զեկուցմամբ ստուգող բրիգադի՝ ստուգատեսի արդյունքների մասին։

Այստեղ ևս ժողովները պետք է տարվեն այնպես, վորպեսզի թե այդ ժողովները և թե ընդհանրապես պլենումները, խորհրդակցությունները ամբողջապես ընթանան գարնանացանը հաջող և ժամանակին լրիվ ավարտելու, ինչպես նաև տվյալ գյուղի առաջիկա կամպանիաները հաջող անցկացնելու կապակցությամբ։

8. Հատուկ ուշադրություն դարձնել գյուղխորհուրդի անդամների սոցիալական կազմի և նրանց գործունեությունը ստուգող բրիգադի աշխատանքների վրա, հատակ գիտակցելով, վոր խորհուրդի հետագա աշխատանքների բարելավումը, ուժեղացումը, նրա հեղինակության բարձրացումը զգալի չափով կախված է այդ բրիգադի գործունեությունից։ այս իսկ տեսակետից անհրաժեշտ է գյուղի ձեռնհաս և բարեխիղճ ուժերը տալ այս բրիգադին և գործը լավ կազմակերպելով՝ հայտնաբերել թուլամորթներին, կազմալուծվածներին, մորթապաշտներին, յենթակուլակներին, առավել ևս կուլակային-անհարազատ տարրերին։ հարցը այսպես դնելով հաշվետու ժողովներում ընտրողների առաջ մերկացնել նրանց։ ու նրանց փոխարեն ընտրել հարվածային կոլտնտեսականներին ու աշխատավոր մենատնտեսների ակտիվից, չքավոր ու միջակ գյուղացիներին և այլն։

9. Ստուգատեսի աշխատանքների ընթացքում, յեթե անհրաժեշտ համարվի այս կամ այն գյուղխորհուրդը ցրել, պետք է այդ հարցը վճռվի շրջգործկոմների սանկցիայով։ Վերջիններս պետք է հետևեն, փորպեսզի ցրելու պահանջը բղխի մասսաների կողմից։ Գյուղխորհուրդի ցրելու պահանջը պետք է բազմակողմանիորեն քննության առնվի ընտրողների մասսայական ժողովներում, խուսափելով այդ հարցում վարչարարական շեղումներից, այլև պայքարելով կապիտալիստական, կուլակա-դաշնակցական պրովոկացիաների դեմ։

10. Ստուգատեսի վրա չպետք է նայել վորպես անջատ, առանձնակի մի կամպանիայի, այլ այդ կամպանիան պետք է անցկացնել լայն մասսաներին հաղորդակից դարձնելով տնտեսական-քաղաքական բոլոր կամպանիաների կատարման և գերակատարման աշխատանքներին։

11. Ստուգատեսը, վորպես գյուղխորհուրդի և նրանց անդամների աշխատանքների մասսայական ստուգում, սկզբից ևեթ այնպես կազմակերպել, վոր բացատրական և ստուգիչ աշխատանքներին զուգընթաց բրիգադների միջոցով ու սոցմրցման հիմունքներով՝ կարելի լինի ներգրավել մասսաները գարնանացանի և գյուղի այլ տնտեսական-քաղաքական կամպանիաների առաջադրանքները կենսագործելու աշխատանքների մեջ, հատկապես մեծ ուշադրություն դարձնել կոլտնտեսություններում, ինչպես և գյուղական աշխատանքների այլ բոլոր բնագավառներում լայնորեն կիրառվեն աշխատանքի սոցիալիստական ձևերը և մեթոդները, առորյա խորհրդային աշխատանքներում ևս կենսագործելով սոցմրցակցությունը, հարվածայնությունը։

12. Սոցմրցակցության կազմակերպման հաջողությունը պահանջում է հաշվետուում և սիստեմատիկ ոպերատիվ զեկավարություն շրջգործկոմների կողմից։ Վերջիններս իր ժամանակին պետք է ոգտագործեն լավագույն գյուղերի փորձը և փոխադրեն այն հետ մնացող գյուղերը, առաջ մղեն հետ մնացողներին, միաժամանակ թույլ չտալով աշխատանքի դիմադրություն, մատնելով անձնա-

կան պատասխանատվություն ամեն մի գյուղի կցված ընկերոջ, բրիգադի և բրիգադիրի համար, անմիջապես հեռացնելով աշխատանքից գործալիքներին, անբարեխիղճներին և այլն։

13. Ստուգատեսի աշխատանքներին մասնակից են դարձվում կենտրոնից գործուղված և շրջանում գտնվող բոլոր աշխատակիցները։

14. Ստուգատեսի վողջ աշխատանքն այնպես կատարել, որպեսզի ապահովվի ստուգատեսի առավելագույն արդյունավետությունը՝ ամրացվի, ստուգատեսի ընթացքում հայտնաբերվի ակտիվը։ Ստուգատեսի վերջում մշակել խորհրդային բոլոր ողակների աշխատանքի որացույցային պլանը, ցույց տալով առանձին ձեռնարկումների կենսագործման ժամկետները և աշխատանքի յուրաքանչյուր մասի համար պատասխանատու անձանց, հասցնելով այդ պլանները յուրաքանչյուր սեկցիային, բրիգադին, պատ. խմբակին, հսկիչ պոստին և նրա առանձին անդամներին։

15. Ստուգատեսի վողջ աշխատանքի հիմնական ողակը համարել նաև յենթակա գյուղը. այդ տեսակետից շրջգործկոմները պետք է ապահովեն վոչ միայն կենտրոնական, այլև յենթակա գյուղի աշխատանքի հաջողությունը։

16. Ստուգատեսի կամպանիայի ընթացքում հատկապես ակտիվ դեր պետք է կատարեն շրջանային մամուլի որգանները, պատի թերթերը և գյուղթղթակիցները, որոնց միջոցով և պետք է կատարել կամպանիայի մասսայականացումը, աշխատանքների լավ փորձի փոխանակությունը, լավ աշխատող բրիգադներին և նրանց անդամների հայտնաբերումը, նրանց աշխատանքների հրապարակումը և այլն։

17. Ստուգատեսի աշխատանքներին մասնակից դարձնել կոմյերիտականներին, պիոներներին և աշակերտությանը, նրանց միջոցով կազմակերպել՝ ա) կապի սպասարկումը, բ) ինֆորմացիան, գ) եատֆետ աշխատանքների ընթացքի և տնտեսական կամպանիաների կատարման մասին, դ) բրիգադների պլենումների և այլ խորհրդակցությունների արձանագրությունները կազմելու, ընտրողներին՝ ժողովների մասին տեղյակ պահելու և այլն և այլն։

18. Շրջանից կցված ընկերները հասարակական ժողովներում զեկուցելիս, անհրաժեշտաբար պետք է պարզաբանեն ժողովականներին՝—

ա) Թե տվյալ եատում ինչ են պահանջում կուսակցությունը և պրոլետարական պետությունը խորհուրդներից, ինչ է նշանակում «բարձրացնել գյուղխորհուրդների դերը գյուղում վորպես կուսակցության գլխավոր գիծը կենսագործողների», մանրամասն բացատրել, թե ինչու «այն խորհուրդները, վորոնք իրենց աշխատանքները չեն վերակառուցի համաձայն կոլեկտիվացման հետ կապված նոր խնդիրների և չեն գլխավորի կոլտնտեսաշարժումը գործնականում, կհամարվեն կուլակային գյուղխորհուրդներ, անընդունակ սոցիալիստական շինարարության քաղաքականությունը կիրառելու» (ԽՍՀՄ Խորհուրդների 6-րդ համագումարի վորոշումներից)։

բ) Մանրամասնորեն լուսաբանել տվյալ շրջանի գյուղի մոտ ժամանակաշրջանի սոցիալիստական շինարարության հարցերը և լուսաբանել այդ հարցերն այնպես, վորպեսզի նրանք հարմարվեն ու կապակցվեն այս կամ այն խմբակի կամ սեկցիայի առաջ ծառացած հերթական հրատապ աշխատանքներին և հնարավոր լինի ընդհանուր խնդիրներից անցնել մասնավոր և կոնկրետ հարցերին, կիրառվի դասակարգային հստակ գիծը, մերկացվեն կուլակները, նրանց գործակալները և սոցմրցման ու հարվածայնության հիմունքներով մոբիլիզացիայի յենթարկվեն մասսաները։

գ) Պարզել, վոր ստուգատեսի նպատակներն են՝ հայտնաբերել այն պատճառները, թե գյուղխորհուրդների սեկցիաները և պատխմբակներից շատերը ինչու դեռևս չեն վերակառուցել իրենց աշխատանքները նոր պայմանների համաձայն (անհարազատ տարրերի խցկվածություն, կադրերի թուլություն, պատասխանատվության բացակայություն, ակտիվի թուլություն, աշխատանքի հին ձևեր, ինքնահոսը, դանդաղ կամպանիաները իրար հետ կապելու անընդունակությունը)։

դ) Պարզաբանել ինչ նշանակություն ունի աշխատանքների սոց. մեթոդների կիրառումը խորհուրդների աշխատանքներում, ինչպես են կազմակերպված և գործնական ինչ ոգուտ են տալիս դրանք արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ և այլն։

ե) Ինչպես ոգտագործել և կիրառել առաջավոր ձեռնարկությունների սոց. մրցակցության փորձը՝ գյուղի արտադրական և հասարակական աշխատանքների մեջ, հաշվի առնելով սոցմրցումն ու հարվածայնությունը կազմակերպելու ուղղությամբ վերջին տարիների բանվորների պայքարի փորձը և համարել անթույլատրելի վերևից պատրաստի մատուցածին ձևերի առաջադրումը։

342—2

1010/42809

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀԱՍՀ—СССР
ԱՄ. Հ. ՄԱՍԻՍՅԱՆԻ
Հ. ՄԱՍՈՒՆԻԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀԻՆԳ ՏԱՐԻ

№ № ըստ կարգի	Փինվ (ազգանուն)	Ստաշինարի թիվը, ընտանիքը	Սեռ		Ազգություն					Սոցիալական դրություն						Կուսակցականություն		
			Արական	Իգական	Հայ	Թուրք	Մոր			Գյուղացիներ	Աշխատավոր	Անհատ. տնտ. ուն. Ցրամիներ	Անհատ. տնտ. ուն. Միջակներ	Բանվորներ	Այլ	Հնգյակի անդամներ և թեկնածուներ	Հինգերորդ անդամներ և թեկնածուներ	Անկուսակցականներ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20
1	Ստուդիաների բրիգադներ																		
2	Բրիգադների խմբեր																		
3	Գարնանացանի բրիգադներ																		

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ստուդիաների բրիգադների կազմի մասին

№ № ըստ կարգի	Ազգանուն, անուն, հայրանուն	Ծննդյան թվականը	Ազգություն	Սոցիալական դրություն	Կուսակցականություն	Ինչ դիրք է գրավում բրիգադում
1	2	3	4	5	6	7

Հատկապես գյուղխորհուրդներն սոցիալիստական այդ մեթոդների կենսագործման ասպարիզում ապահովելու յեն՝ ա) աշխատանքի հաշվառում. բ) ծրագիր, վորը պետք է լինի անպատճառ որացույցային խիստ ժամկետներով. ամեն մի սեկցիայի և պատ. խմբակի ծրագրում նախատեսնել բրիգադների և հսկիչ պոստերի աշխատանքները. բացի այդ պետք է ունենալ առանձին բրիգադների և հսկիչ պոստերի աշխատանքների ծրագիր. գ) դիսպաչերկություն լիկվիդացիա, այսինքն՝ անձնական պատասխանատվություն աշխատանքի յուրաքանչյուր ասպարիզում՝ յուրաքանչյուր բրիգադի, հսկիչ պոստի համար. դ) աշխատանքի պարբերական ստուգում. ե) լավագույն աշխատողների խրախուսանք, անգործների անընդհատ հետապնդում. զ) աշխատանքների փորձերի և լավագույն ձևերի լայն փոխանակություն, առանձին բրիգադների, հսկիչ պոստերի, սեկցիաների, պատ. խմբակների և գյուղերի միջև։

19. Հիշյալ աշխատանքի ապահովության համար՝ անհրաժեշտ է ստուգել խորհուրդների աշխատանքները, խորհուրդի ամբողջ անձնական կազմը, հայտնաբերել գյուղի սոցիալիստական վերակառուցման ենթուզիաստներին, ներգրավել նրանց ակտիվը աշխատանքի և գյուղում ամեն մի աշխատավորի ներգրավել աշխատանքի այն բնագավառը, վորին նա ավելի յե ձեռնհաս ու հակված։

20. Այսպիսով գյուղխորհուրդների աշխատանքների վերակառուցման հիմնական պահանջներ համարել՝—

ա) Ծավալել խորհրդային կազմ-մասսայական աշխատանքները, աշխատանքի ծանրությունը տեղափոխելով սեկցիա, նրան կից բրիգադ, սեկցիայի հսկիչ պոստ, պատ. խմբակ և նրա հսկիչ պոստը կոլտնտեսության բրիգադներում, մտցնել նրանց մեջ պլանայնություն, փաստացի կատարման ստուգում, աշխատանքի սոց. ձևերի տարածում, բարձրացնել պատասխանատվության կոնկրետացումը խորհրդի ամբողջ աշխատանքների հիմքում, դնելով ընկ. Ստալինի 6 ցուցմունքները և նրա ծրագրային զեկուցումը Համկոմկուսի և ԿՎՀ-ի հունվարյան միացյալ պլենումում գյուղի աշխատանքների մասին։

բ) Անողոք պայքար դասակարգային թշնամու և նրա զինակիցների դեմ, յերևան հանել և արմատախիլ անել նրանց։

գ) Սիստեմատիկ աշխատանք՝ հեղափոխական որինականության և խորհրդային դեմոկրատիայի ամրապնդման համար,

միաժամանակ ջնջելով պայքարը սոցիալիստական սեփականություն հափշտակողների դեմ։

դ) Սիստեմատիկ աշխատանք, կոլտնտեսությունը քաղաքականապես-տնտեսապես և կազմակերպչորեն ամրապնդելու համար։

ե) Խորհրդային իշխանության հերթական ձեռնարկումների պլանները և առաջադրանքները ժամանակին լայն մասսաներին հասցնելու, այդ մասսաներին կազմակերպելու, խորհուրդների պլանների գործնական կատարումը և գերակատարումը սոցմրցման ու հարվածայնության հիմունքներով և այլն։

21. Գյուղխորհուրդների ներկա ստուգման հաջողության հիմնական ու նախնական ցուցանիշը հասմարվելու է յերկրորդ հնգամյակի առաջին գարնանացանի լիակատար և արագ կատարումը կուսակցության ու կառավարության առաջադրանքների հիմունքներով։

22. Գարտավորեցնել շրջգործկոմներին անմիջապես կոնկրետ զեկավարել ու դյուրավորել ստուգատեսի կամպանիան և ամեն մի զեկադում ամփոփումները ստուգատեսի ընթացքի մասին և այդ ամփոփումների ընդհանրացումները ներկայացնել կենտգործկոմի Գազմբաժնին։

Հայկենտգործկոմի Գազմբաժնի վարիչ՝ Գ. Ստեփանյան

Դ-ն փետրվարի 1933 թ.
Յերևան.

№ № ըստ կարգի	Թիվը (բրիգադի)	Անդամների թիվը՝ ընդամենը	Սեռ		Ազգություն					Սոցիալական դրություն						Կուսակցակա-նություն		
			Արական	Իգական	Հայ	Թուրք	Ռուս			Գյուղացիներ	Բանվորներ	Անհատ. տնտ. ուն.		Բանվորներ	Այլ	Հեղափոխ. դեմոկրատներ	Հեղափոխ. սոցիալիստներ	Անկուսակցականներ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20
1	Սառուցահանքի բրիգադներ																		
2	Բրիգադների խմբեր																		
3	Գաբնանացանի բրիգադներ																		

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սառուցահանքի բրիգադների կազմի մասին

№ № ըստ կարգի	Սառուցահանքի կազմակերպությունների անունը	Անդամների թիվը՝ ընդամենը	Ազգություն					Սոցիալական դրություն						Կուսակցականություն		
			Հայ	Թուրք	Ռուս			Գյուղացիներ	Բանվորներ	Անհատ. տնտ. ուն.		Բանվորներ	Այլ	Հեղափոխ. դեմոկրատներ	Հեղափոխ. սոցիալիստներ	Անկուսակցականներ
										Զբաղվողներ	Մինչև					
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
1	Սառուցահանքի բրիգադներ															
2	Բրիգադների խմբեր															
3	Գաբնանացանի բրիգադներ															

№ № ըստ կարգի	Սառուցահանքի կազմակերպությունների անունը	Հեղափոխ. դեմոկրատներ	Հեղափոխ. սոցիալիստներ	Անկուսակցականներ
1	2	18	19	20
1	Սառուցահանքի բրիգադներ			
2	Բրիգադների խմբեր			
3	Գաբնանացանի բրիգադներ

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀԱՅ. ՍՍՌ
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

«Ազգային գրադարան»
NL0212213

39. 722